



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎԱԾՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԱՐՈՒՄ ԵՍ ԵՐԱՐՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 64

ՍԵՊՏԵՄԲԵՐ 29/12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԻԿԵ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Սեպտ. 29/12 Հոկտ. † Թիւ 64

Ա. ՊՕՂՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

Ը,

(Շար.)

ՊԱՏՄԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍԸ

Այսպէս կը թուի թէ Առաքեալը՝ որ ա՛յնքան նախանձախնդիր է Քրիստոսի մեծութիւնը փառաւորելու, փորձութիւնը պիտի ունենար քողարկելու անոր տկարութիւններն ու նուազելու անոր խոնարհումները: Բայց հակառակն է որ կը պատահի: Զր, սուրբ Պօղոս ամենաչքեղ պերճութեամբ կը հաստատէ թէ Քրիստոս, որ աստուածութիւնը սովորեցուց, իրապէս մարդ ալ է, ամենեւին նման մարդկանց՝ բացի մեղքէն: Կարծես տեսակ մը գոհունակութիւն իսկ կ'զգայ այս հակադրութենէն:

Անհրաժեշտ է որ Քրիստոս ճշմարիտ մարդ ըլլայ իր կոչումը կատարելու համար. ինչու որ, արդի տնտեսութեան մէջ, ան պէտք է

ըլլալ երկրորդ Ադամ, անդրանիկը մեջ, անդրանիկը շատ մը եղբարց միջեւ, Քանանայապետը [Հռ. Ը, 29: ԺԲ, 15: Եբր. Բ, 17 ևն]: Արդ, եթէ իրապէս մարդ չըլլար, ոչ նոր Ադամ մը պիտի ըլլար՝ ո՛չ յարուցեալ, ոչ Քանանայապետ, և սուրբեր պիտի չունենար իբր եղբայր: Նախախնամական արդի կարգադրութեան մէջ, ուր մարդ կ'իյնայ ու կը կապուի համերաշխութեան լրանց համաձայն, անհրաժեշտ էր որ Աստուծոյ Որդին մեր իսկ բնութիւնն զգենուր, ոչ թէ աւելի գիր ի վերոյ բնութիւն մը, որ մարդ ըլլար՝ ու որդի մարդոյ, բոլորովին անձնուէր ըլլալու համար մեր շահուց ու կարող զայնս հոգալու: Պարտաւոր էր որ իր մարմինը մեղաւոր զանգուածէն փոխ առնուր, որպէս զի արբութեան խմորը դնէր անոր մէջ, ու զգենուր մեղաց մարմնոյ նմանութիւնը՝ որպէս զի դատապարտէր մեղքը մարմնոյ մէջ:

Այս պատճառաւ՝ ահա, «մարմնով երեւցաւ» [Ա. Տիմ. Գ. 16]: և մարմին ըսելով Առաքեալը կ'իմանայ՝ հոգին մարմնոյն միացած, մարդկային կազմը. իր ճշմարիտ մարդ ըլլալը արդէն ապացուցուց ան իր բոլոր երկրային կեանքին ու մարդկանց հետ ունեցած երկար յարաբերութեան մէջ, մանաւանդ իր չարչարանքով, իր մահուամբ և իր յարութեամբ. Կերպարանո՞ք զսեպ իրեւ զմարդ [Փիլ. Բ, 8]՝ Նահապետներէ կը սերի ան [Հռ. Թ. 5]: Աբրահամու զաւակ է [Գաղ. Գ, 16], Իսակի որդի է ըստ մարմնոյն [Հռ. Ա., 3]: Ծնած կամ լաւ եւս «եղած է կնոջմէ մը», այսինքն կնոջ մը էութիւնէն ու արիւնէն ձեւացած, առանց այր մարդուն գործակցութեան և հակառակ օրինաց բնական ծննդագործութեան. բայց այս առանձնաշնորհը, որ կը պարտի իր գերբնական արժանապատուութեան, ինչպէս նաեւ իր քանդած մեղքին հետ ամէն յարաբերութիւն խզելու պէտքին, չ'արգելուր որ նոյնքան ճշմարիտ մարդ մ'ըլլայ՝ ինչպէս էր իր Ստեղծողին ձեռքէն ուղղակի ելնող առաջին Ադամը. [Հռ. Ե. 15: Ա. Կոր. ԺԵ, 21: Փիլ. Բ, 8: Ա. Տիմ. Բ, 5 ևն.]:

Աստուած ու մարդ միանգամայն, Յիսուս Քրիստոս պէտք է ընդունի բոլոր ստորոգելիները՝ որոնք կը պատշաճին Աստուծոյ և մարդուն: Չկայ տեղ մը ուր սուրբ Պօղոսի գրութեանց մէջէն աւելի ցայտուն նշանակուած ըլլայ այս առանձնայատկութեանց հաղորդակցութիւնը: Նախադրութիւնը պատմական կեանքն ու փառաւորեալ կեանքը միացուած են շատ յաճախ նոյն պարբերութեան մէջ ու միեւնոյն հետեւեալ կային յատկացուած. այսպէս

«Աստուծոյ կերպարանքն ունենալով... [Նախազոյրութիւն]

«Ծառայի կերպարանք ստաւ... [Երկրային կեանք]

«Ուստի և Աստուած զանի բարձրացուց...» [Փառաւորեալ կեանք]

[Փիլ. Բ, 6, 7, 9: Տե՛ս նաեւ Կող. 1, 16—18: Բ. Կոր. Ը, 9...]

Ինչ ինչ սատրուկներ չպատշաճելով մարդկային բնութեան, և ուրիշներ ալ անհաշտ ըլլալով աստուածային բնութեան հետ, անհրաժեշտ է ուրեմն որ երկու բնութիւն գտնուի ի Յիսուս Քրիստոս. պէտք է նաեւ որ մէկ անձ ըլլայ՝ քանի որ նոյնը կը մնայ սեփականութիւն վայելող ենթական: Ինչպէս կը կատարուի այս միութեան խորհուրդը Պօղոս չի բացատրեր զայն. միայն վարդապետութեան հիմը կը դնէ. ու աստուածաբաններու կը մնայ անկէ եզրակացութիւններ հանելը: Նուազ չանկան չեն նաեւ մարդեղութեան մասին անոր կազմած երկու բացատրութեան ձեւերը: Այսպէս կը գրէ Կոլոսացեաց. Սևոր մեջ կը բնաւի մարմնաւորս ցես աստուանութեան քորո յիւրիւնը: Արդ, Աստուածութեան յիւրիւնը ուրիշ բան չի կրնար ըլլալ՝ եթէ ոչ աստուածային էութեան ամբողջութիւնը, և հետեւաբար նոյն ինքն աստուածութիւնը: Եւ իրօք, քննօրիս [աստուածութիւն] վերացեալն է քննօր [Աստուած] բառին, ինչ որ սարքեր է քննօրիս [աստուածութիւն է՝ որ վերացեալ զազափարն է քննօր] [աստուածային]ի: Այս վերջին բառը կրնայ իմացուիլ յատկութեան իմաստով մինչ առաջինը բնութեան իմաստով կ'առնուի: Այս իմաստն ալ աւելի պարտաւորիչ կ'ըլլայ՝ երբ Պօղոս դէմ կ'երնէ Կոլոսացեաց մոլորութեան ըստ ուրում աստուածութեան մասնիկներ ու բոլորումներ մը կը գետնէին գերագոյն զօրութեանց մէջ. բայց ըստ ինքեան անկախ է այս վարկածէն: Ինչ կը հասկնայ Պօղոս «մարմնաւորապէս» ըսելով: Շատ մը հայեր զայն կը թարգմանեն «իսկանպիս» կամ «գոյացապէս». բայց մարմինը այս իմաստը չունի՝ եթէ ոչ երբ հակադրութիւնն է ստուերին: «Մարմնաւորապէս» կը նշանակէ «մարմնոյ մը մեջ». մարմնոյ ձեւին տակ. այս իմաստը ամէն պարագայի մէջ ալ յոյժ պատշաճ է և պէտք չկայ ուրիշ իմաստ փնտռելու: Ձեր կարծեցեալ իմաստասիրութիւնը, կ'ըսէ Պօղոս, զուր խաբէութիւն մըն է, սարրական սղայական վարդապետութիւններու մէջ կը դանդաղիք. դուք երեւակայութեան ցնորական աշխարհէն պաշտպաններ ու մշնորդներ կը խնդրէք, ու բարձիթողի կ'ընէք ան՝ որու մէջ տեսանելի ու շօշափելի կերպիւ մը, զերծ ամէն մոլորութենէ և պատրանքէ, «կը բնակի մարմնաւորապէս աստուածութեան քորո յիւրիւնը»: Եւ որովհետեւ մշտնջենաւոր կերպիւ ունի այս բացարձակ լիութիւնը, զայն ձեր վրայ եւս միշտի ցօղէ հոգեւորական շնորհաց տեսակին ներքեւ, և այսպէս պէտք չկ'իսկ ունենանք այլեւս ուրիշ միջնորդներու:

(Շար.)

ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

ւոր ու սուրբ ցնծութեամբ լեցուն ըլլալ կը խոստանան: Այն աստիճան բուն է եռանդը այն ազնիւ անձնաւորութիւններուն որոնք կը կազմակերպեն ինչ որ անհրաժեշտ է սոյն հանդիսութեանց, այնքան մեծ՝ շատաւ քիչ քան իրենց հազարագիններուն՝ որոնք ամէն ճիգ ու ջանք կը քսին փնտրելու այն. այնքան ապացուցիչ՝ փառաւորութիւնն ու արժանապատուութիւնը մայրամաղափին. որոնք սահմանուած օրերուն պիտի հիւրընկալէ ամէն կողմերէ հրաւիրուած անքիւ բազմութիւն մը հաւասարեցանքուն, որ յոյժ շքեղ եւ իրապէս յաղթական հանգամանք մը պիտի ստանան Ս. Խորհրդոյ լոկաւորուած պատիւները: Ասոր համար, ահա, մենք եւս մասնաւոր ու բարձր գովեստներ կու տանք մեր յոյժ սիրելի Որդւոյս Ստաֆիլական Կայսեր ու արքային Փրանկիսկոս Յովսէփի, որոնք ինչպէս եռանդուն է կրօնի մէջ եւ խիստ յարած մեր անձին, լիովին բաջալերելով Համաժողովին առաջարկը, որոշած է կրկնապատկել վայրը ծրարուած հանդիսութիւններուն՝ իր Վսեմութեան բոլոր շուքով, եւ որոնք օրինակին հետեւելով, պերճաւորաբար Արհիդիոսիներն ու նորին Կայսերական թանգարանը Տիկիներն աներեւակայելի մեծ փոքրով կը գործակցին յայտնութեամբ ի գլուխ հանելու այն կարեւոր Գործը:

Վիեննայի սոյն Համաժողովը սակայն ինչպէս կը նախատեսուի, ճշտաւոր պիտի ըլլայ ի փառս Յիսուսի Քրիստոսի. բայց մենք կ'ուզենք որ ան արդիւնաբեր ըլլայ նաեւ ամէնուն համար:

Ստուգիւ շատ, կարի բարի անձերէն, մեծ քուով կը համալսմբութիւն չբերես դիտելու Հաղորդութեան խորհուրդը, եւ անկէ պաշտելու որ ամէն օր լաւագոյն ըլլան իրենք: Բայց անոնք որ կատարելապէս կը յարգեն այս սիրոյ խորհուրդը, պէտք չէ սոսկ այնպէս մը գոհանան իրենց անձնական օգուտը միայն փնտրելով՝ որ անփոքր զանազան շատերու փրկութեան համար, այնպիսիներուն՝ որոնք կամ զգաւորութեամբ, կամ անհոգութեամբ կամ ճաշկերպութեամբ չեն մասնակցիր այս աստուածային Դնունդին: Թող տեսնեն թէ որքան վառագոյն կերպով կը սկսածայ մարդկային ընկերութիւնը. եւ որքան կը վառուժնայ բոլոր առաքիւնութեան քմբոյրութեամբ՝ հեռանալով Անորմէ՝ որը միայն կարող է խնամել զինք, մինչ իր անհուն սէրը մարդկանց հանդէպ, որ Հեղինակն է սոյն Խորհրդոյն, բազում կը բռնէ զինք մեծցելուպէս երկրի վրայ: Սա կը փափաքինք ուրեմն՝ որ այս բանին միջին բարիները, այս բանին անոնք ամէն ճիգ ի գործ դնեն, այսինքն թէ, Հաղորդութիւնը, իբր բուն իսկ առաստաղ աղբիւրէն, Յիսուսի կեանքը աւելի ծաւալուն եղանակաւ քափանցէ ո՛չ միայն անհասներու հոգւոյն եւ առանձնաններու սովորոյթներու մէջ. այլ ժողովրդական հիմնարկութիւններու եւ ամէն դասակարգի հազարագիններու մէջ եւս: Զի կարելի չէ ո՛չ անհասապէս առաջնի կենցաղ մ'ունենալ, ոչ հանրապէս ընդհանուր կարգն ու սարքը պատշաճել՝ եթէ կրօնից աստուածային զօրութիւնը չտանձէ հոգւոյն անկարգ շարժումներն ու չհամոզէ արհամարհելու անկողուն բարիքներն անանց բարեաց ակնկալութեամբ: Մենք սակայն ձ'ը խորհուրդին, ու մանաւանդ ձեր հաւատարմութեան կը յանձնարարենք երեսաստորոյթիւնը, որոնք ապագային յոյսն ըլլալով, զարմանք չէ եթէ մասնաւոր ուշադրութեան կէս նպատակի եղած է Քրիստոսի իրաւունքն ու թիւնի եղողներուն, կա՛մ իրենց մոլոր վարդապետութեամբ եւ կա՛մ զգայարանաց հանդիմաններուն գրգռ ճալովնին:

Անպէս չէ սակայն յուսալ՝ թէ քանի երեսաստորոյթներ որ ներկայ ըլլան Վիեննայի Համաժողովին, նոյնքան ալ արագային պիտի պահեն մեծապէս, իրենց բոլոր կեանքի գործողութիւններուն մէջ, Կարողիկէ դաւանանքը, ու յայն պատշաճներն ու ձգձգութիւնն: Մարդկային ազգի աստուածային Փրկիչը, որու անսահման փառքերը պիտի հոշակուին շատ մը նշանաւոր հաւատարմութեան, որու գրութիւնը պիտի հայցուի հանդիսաւոր պաղատանքներով, Ան՝ որ ուրիշ բան աւելի չփափաքիր եթէ ոչ միայն իր վերջնական սերունդները, անուրիշ պիտի հեղու այս Համաժողովին վրայ գործութիւնը իր պարգեւներուն. եւ որոնց իբր երաւիսի ըլլայ Առաքելական օրհնութիւնը զոր հեղինակը, սիրեցեալ Որդ-

եակ մեր, ու բոլոր նոյն Համաժողովին եկողներուն, եւ զիսաւարար Վեհափառ Կայսեր եւ Իւ Մեծափառ Տան կը ընտրենք սիրողեզ:

Տուեալ ի Հոսով առ Ս, Պետրոսի ի ժե: Ոլոստոսի ՌՋժԻ [1912], Մեր Բանաւարկայեանքեան ժ. տարին:

ՊԵՌՍ ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏ Ժ.

Ս. Բանաւարկայեանք՝ իրաւամբ իր այս համալուստագրին մէջ մասնաւոր զուրգութեամբ ու սքանչանք կը յայտնէ ծերունազարդ Փրանկիսկո-Յովսէփ Կայսեր հանդէպ: Ձի. առանց չափազանցութեան կրնանք ըսել թէ, Վիեննայի Համաժողովին համար Կայսեր ցոյց տուած բարեպաշտ հոգածութիւնը փառքի ճաճանց մը կը սեպուի իր կենաց իրիկնամուտին, նման մայրամուտ տրեւին արձկած ճաճանչներուն՝ որոյնով կը բացաւ առաջ հորիզոնը գեղեցիկօրօւաւ: մը վերջանալու պահուն:

Բայց մենք. Բրիտանիաներս, պէտք չէ բնաւ չափազանցենք Թագաւոր-Կայսեր կողմանէ Մեր Փրկչին հանդէպ եղած այս հաւատքի եւ երկրպագութեան արարքներու արժանիքը, զի գիտենք ամենքս ալ թէ մարդ ծուկի վրայ միայն մեծ եւ Աստուծոյ առջեւ:

Սակայն այլուստ միւլթարիչ է նկատուի թէ անցեալ աշբուոյ մէջ Սպանիոյ երկտոսարդ Թագաւորին Ալփոնս ԺԳ.ի, եւ ներկայիս Աւրստրիոյ-Հունգարիոյ ալեղարդ Վենապետին սոյն հաւատքի արտայայտութեան բոլոր մը կը ձեւացնեն կաւեցնելու համար երկար ստեն՝ բուն ծաւալումը մերժողական վարդապետութիւններուն եւ նոյն իսկ անբարոյացիչ սիսղէմներուն՝ որոնք իրենց կասարեալ կործանման կ'առաջնորդեն Թագաւորութիւններն ու կայսրութիւնները:

Ուրեմն ընկերային ծառայութիւն մըն է զոր ծերունի կայսրը կը մատուցանէ իր ժողովուրդին՝ անդրաշխարհի սեմոց վրայ կոխած պահուն, որդե հաւաքումը պէտք ցփռցուի անշուշտ՝ երբ արդարութեան նժարին մէջ կշռուի ան:

(Շարունակելի)



Ի ԴԱՌՆԱՂԷՏ ՄԱՀ ՎՍԵՄԱՇՈՒՔ ԱՌՆ ԱՆՏՈՆ ՓԱՇԱՅԻ ՆԱՔԻԼԵԱՆ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐ ԽՕՍՔ

Հնանուեցան, ժամանակներէ ի վեր հնձուեցան մեր արդիւնաշատ Աւագորեարը, պանծալի՛ կեանքեր ու սխալի փառքեր. հնձուեցան մահւուան անգութ մանգալով սիրունդներու, դարերու պանծալի ներկայացուցիչներ: Տաղալեցան Լիբանանու մայրերու նման, անհուն հեծութեամբ. և այդ պերճազարդ բուրաստանը ամայացաւ դոգցես և խոսացաւ, և մեր հառաչներն և արտասուք հեղեղանման հոսեցին այդ մեծերու, այդ դիւցազն առաքինեայ գերեզմաններուն վրայ. «Զիւմ'ոյ անկան զօրաւորն»: Եւ դեռ սուգ սուգի կը յաջորդէ. ետեւէ ետեւ կը կը թօթափին մեր փառազարդ ու ակնն պերճ պերճ գոհարները: Անխրաւ հարուածներու տակ անդին Հայաստան կը դրդի, աղերարչ վայնասիւններով, երբ տապառտ կ'իյնան կը թարչամէն վեր կտրիճները, մեր հորակապ փառալուսք: Դեռ օդոյ մէջ կ'արձագանգեն աւաղակային թնդիւնները որ դրդեցին Եփրատայ նովիսը, երբ ահաւոր լուսնն յաւով արձանացած, սրտակեղեք գոչեցին Տիգրանակերտի մեր եղբարքը. «Հաննա՛ Հաննա՛»: և հեծեցին հայ քաղաքներ, և արտասուեցին հայ քաղաքներ. «Հաննա՛, Հաննա՛, ո՛վ անվրէժ դալկացած անման նահատակ»: Ի կ'հոս, սգակիր եղբարք իմ, ահա հոս ալ յաղթանակեց անգութ մահը. անողոք խեղ մեղմէ ազնուազարմ, ազնուոգի, ազնուասիրտ և բազմամեայ առաքինութեան տիպար. զՎսեմ. Անտոն փաշա Նաֆիլեան. ահագորցն մահը ողորդեց մեր արցունքներով այդ սարսաղագեղիկ դադաղը, յորում կը հանգչին մնացորդներն մեծատաղանք արուեստագէտին, մեր ամենուն սիրելի բարեկամին պաշտելի նախանկար օրինակին, քնքուշ հայրիկին, անձկալի նահապետին: Վախ տնիրաւ մահ, դառնադատն բաժանում. վախ, ունայնութիւն ունայնութեանց... Սակայն աղէ՛, մէկդի առէ՛ք մահահոտ այդ քօյր. ես նկատեմ զնոնմ այն կենդանութիւնն որ եղաւ և կայ այս անկենդանութեան մէջ, ըսեմ այն խորհորդները որ դուրս կուգան այս անձուկ դադաղէն, իբրեւ օրինակ մարդու և քրիստոնէի, լսեմ ինչպէս այն՝ որ կուլայ ու կ'ընէ. բայց իբրեւ այն՝ որ կը յուսայ և անդրաշխարհէն ձայն ու պատգամ կը լսէ:

Կարծես հին դարերու խաւարամած առասպելային մանուածներուն մէջ կը մտնենք այս կենսագրութեան աղբերակնը որոնելով: Պատմութեան հետամուտ ընթերցողը կ'ապշտարի սուգ ժամանակի մէջ կատարուած փոփոխութեանց, ընկերային և նիւթական, անկո և անմահ:

կարի ողորացեալն վսեմ. Անտոն փաշա Նափիլեան հին քարերու պատ-
ուհաս մըն է նորին վրայ: Սերոս է նա աղնուազարմ գերդաստանէ,
եթէ երբեք անձնական կորովով ուռճալով ընծիւղի մը փառք կրնայ
լլալ զարմը: Մեր համայնքին մէջ երեւցաւ նա, այս մեծ մարդը, այս
մեծ հոգին, զոր պատի նկատէինք տարիներու յաջորդութեան մէջ միշտ
աւելի կատարեալ, նման միշտ աւելի պայծառացող բարձրացող ոստոյի
մը, որ միշտ կը շուլայ, նոյն իսկ երբ մարի: Այն վաղեմի ժամանակ-
ներու մէջ երբ զիւռ տգիտութեան խաւարը կը մածնուր այս անբախդ
հայրենիքին վրայ, երբ անոր ընկերն՝ աղիւթասան խժուգութիւնը կը
մոլեգնէր Մեգերանման, ահա երեւցաւ Նափիլեան՝ գիտութեան և քա-
ղաքակրթութեան, յուսոյ և սիրոյ, պարտքի և փառքի վսեմ ուսնովի-
րայ: Բանականութեանը հետ ուռճացաւ միտքը, կորովացաւ. կշռեց
համայնքը և խոյացաւ գիւղազնարար. Աստուծոյ տուած կեանքը բեղմ-
նաւորելու: Իրրեւ մարդ կատարեց պարտքը, և իրրեւ վարձ՝ վաղեց
անոր հետէն փառքը: Անհուստալի է եղբարք իմ, այդ մեծ մարդուն
աշխատասիրութիւնը և զոնդութիւնը. տարիներ ու տարիներ, անհա-
նում տարիներ չկեցին այս կորովը. ինկաւ նա զէնք ի ձեռին՝ Երիտա-
սարդութեան բմբուսացող կրքերը հեգնեց՝ ընկճեց, սորվացուց. նուի
րեց զինքն ամբողջովին իր նախասիրած գիտութեան: Եւ նախասիրեց
բժշկութիւնը, Դժուարին, խորին, բայց աշխիւ գիտութիւն, տիրապետող
ընտելեան գազանիքներուն, մարդկային մարմնոյ քահանայութիւնը.
հրաշագործող Աստուծոյ օգնականը, աստաղեղով ընտելեան արագահաս
մխիթարչը, Շքեղ և ազնիւ գիտութիւն, որ կ'ամփոփէ մարդկային միտքը
աստուածացնող ամէն ճիւղեր. և կը տանի ուղղակի առ Աստուած, եթէ
հետ. իեամբ չչեղի մոլար. գիտութիւն որ կ'ուսումնասիրէ անհունա-
պէս փոքրը՝ անհուն իմաստասիրութեամբ. գիտութիւն կենսատու՝ որ
աւելի քան արքայավայել ճոխութեամբ կը բարերարէ մարդկութեան:
Հրաշք է, եղբարք իմ, հրաշք է տեսնել հոնճարաշատ, բարեկեցիկ,
բժշկական գերազանցութիւն մը, որ խաւարչաւ ն և մահահատ, որջերու
մէջ անվարձ և մայրական իմանդաղատանօք կը հակի հիւծամաշ կուրծքի
մը վրայ, և կուտայ արցունքի մը հետ իւր արծաթն ալ. մէ, հրաշայի
է այդ. անյնելով բարերարող Տեառն Բրիտանոյ ստուերն է այդ. ազնիւ
գիտութիւն, պաշտելի իմաստութիւն, սրբա՛նք մարդկային ազգի:
«Աւեստանեղ աղիւսաց առաջնաց գիւ, թժիկեղ գրեկեալս որդիս» Ահա Նա-
փիլեան երկոտասարդը, ամէնուն զարմանալի կը հանդիսանայ իր ուսում-
նասիրութեամբ. անխնջ և անդողար ուսումնասիրութեամբ. ի կ.
Պոլիս՝ գիտութեան վարժարանի մէջ իր վկայագիրն առած և պաշ-
տոններու անցած ըլլալով հանդերձ, քանի մը տարի վերջը՝ (1888-ն)
կը դիմէ ի Բարիւ. կատարեալագործելու համար իւր արուեստը. զարմա-
նալի հանդիսացաւ հոն ալ և սուղ ինչ յետոյ Բարիւղու կաճառէն սրակ-

ուեցաւ : Բայց նա կը սորվէր գործելու համար . անգուսպ գործունէ-
ութիւն մը կենդանացուց իր երկար ասպարէզը : Բարեգու իւր հաշա-
կաւոր բրոֆէսորը կը համուէր զինքը մնալ այն քաղաքակիրթ աշխար-
հին մէջ , անհուշտ փայլուն ասպագայի մը ակնկալու . ո՛չ ո՛չ նախընտ-
րեց նա փութալ իւր հայրենիքը . գիտութեան և քաղաքակրթութեան
չափ մէկ ձեռքը , բժշկութեան պաշտանը միւսը : Եւ այս կէս դարէ
աւելի տեսող բեղմնաւոր բժշկական կեանքին մէջ ամէն դժուարին ծա-
ռայութիւնք իրարու յաջորդեցին անընդհատ : Թո՛ղ խօսին իրիմու դաշ-
տերը , ուր (1854) Թնդիւններու , բանակաց բախումներու , մահուան
պայքներու մէջ անգնահատելի անձնուիրութեամբ զոհեց զինքը ի բա-
րին վիրաւորելոյ . Թո՛ղ խօսին Կրեաէ կղզւոյն սարք և ձորք , ուր ա-
հագնաբնորդ երկրաշարժին ժամանակ (1856) վաղեց օգնելու աղէտ-
եաշներուն՝ հայրաբար զթաժ . Թո՛ղ խօսին Հայտար Բաշայի հիւանդա-
նոցին հեծեապին նկուղները , ուր (1878) Թուրքեւոռս պատերազմին
մարդկային ողորմելի բեկորները զիջուեցան և ուր հազարաւոր թշուա-
ներու կեանք տուաւ նա՝ կայսերական վիրաբուժապետ . այն ատեն էր
որ Զօրավար Սքօպլէֆի առջեւ . համարձակ մի ամտութեամբ բժշկական
վարժարանը ազատեց պուլկարական հրձիգութեամբ այրեալները լլլա-
լէ : Այս հակիրճ ժամուս մէջ ո՛ր մէկը թուեմ , եղբարք իմ , այս բեղմ-
նաւոր ու բարերար կեանքին մեծ գործերէն : Երկար տարիներ գործեց
նա բժշկապետ և վիրաբուժապետ ի Հայտար Բաշա , ի Կիւմիշ Սուլու
և ի Թօփհանէ . երկար տարիներ գործեց նա իւր բժշկապետ ոչ միայն
մեր համայնքին և ազգին , այլ նաեւ իսլամ մեծամեծներուն , վէզիր-
ներուն և միւշիրներուն . երկար տարիներ գործեց նա փառաւորու-
թեամբ՝ իր արքունեաց թիչկ-մասնագէտ . և երբ արքայազուն Իշխա-
նի մը . Սուլթան Համիտի որդւոյն ծանր ճգնաժամին առջեւ բոլոր պա-
լատական թիչկները ապիկար մնացին , ահաւոր բռնակալին առջեւ ,
Նաֆիլեան փաշա գիշերով կոչուած : — արհուրալից գիշեր և սարսաղ-
գեցիկ կոչ , — Նաֆիլեան փաշա թեւ գողգոջուն ձեռքերով բայց կու-
րովի գիտութեամբ փրկեց և՛ Իշխանը և՛ բժշկութեան պատիւը և՛ իր
ընկճեալ ընկերակիցները : Բայց մեղուաջան աշխատաւորը , այս արդիւ-
նաւոր մարդը հնարքներ կը ստեղծէր հայրենեաց օգտակար լլլալու .
մէկ կողմէն մեծահատոր երկասիրութիւններ կը գրէր հսկո մներով , երկ՝
որ կայսերական գնահատման արժանացած՝ սոոր նախանձին ձեռքին
մէջ խեղդուեցաւ , միւս կողմէն կ'երթար Գաղլիոյ Նախագահին աղաչե-
լու որ վիրաբուժութեան օսմանցի պատանիներ ընդունի Կաճառին մէջ .
և Տիւ ժարուէն Պօմէ կ'ընդունէր — ձրիարար — քսան աշակերտ . բայց
չլրկեցին , յետսամիտ զաղափարներ : Նաֆիլեան պնդեց և քանի մը հաս-
գոնէ տարաւ և հսկեց անոնց վրայ և հացուց , անոնք փառք են հիմա
իրենց հայրենեաց և արուեստին , որոց մին է Վահմ . Ճէմիլ փաշա : Ո՛հ ,

անհատնում են անոր ջանքերն ամէն երէտասարդ ըփշկ հայր մը կը զանէր անոր մէջ . կը գուրգուրար ամէնուն վրայ . կը մղէր յառաջ . և ինքը անոնց յաջողութեամբ երջանիկ էր . կենդանի են իր բարերարեալք և կ' իստատվանին աղնուութեամբ :

Երեւակայեցէք ուրիմ թէ ինչպէս կը գուրգուրար նա իւր համայնքին . ո՛հ , կը խաբաղանէ զիս ժամանակին սղութիւնը , ներեցէ՛ք որ վաղելով ըսեմ . . . աղքատներու կարօտալք արագահաս օգնական մը և միութարիչ հայր մ'ունէին , Նաֆիլեան փաշան . Ս . Յակոբ հ'ւանդանոցը հրաշալիքնիր տեսաւ անկէ . սիրահարած էր այդ հիւանդանոցին . դեռ վերջին տառապագին օրերուն մէջ անոր բարեկաման վրայ կը խորհէր . քանզի ժամանակին իր կեանքէն մաս մը տուած էր անոր , այնքան ահաւոր գրաղմունքներով բռնաւորոյած ժամանակ կ' զանէր տարիներով անոր մէջ դարձելու . առանց վարձուց . և իր կառավարութենէ ստացած թուակր նոյն հիւանդանոցին պարգեւելով . և ստէպ ալ յայնչն դրամական նուիրատուութիւններ ընելով . և աղքատներուն համար իր դրամապանակը պարպելով : Ո՛վ ազնիւ , ո՛վ մեծ . ո՛վ անմոռանալի մարդ . « Լէ'ր ուրոց հայր եւ եղիցիս որպէս որդի Բաճուրայն » (Սիր . Դ . 10) : Այսպէսով էր որ փառքն ալ վաղեց իր ետեւէն . ամենաբարձր պատուոյ տաճիճաններուն բարձրացաւ . ամենամեծ շքանշաններով զարդարուեցաւ . իւր հաշակն հնչեց յարեւելս և յարեւմուտս :

Եղբարք իմ , այս հանրային հռչակուոր մարդը , հիւանայի օրինակ մը ձգեց մեզ իր ընտանեկան կեանքին մէջ : Աղաւնեման լոյն մը կազմեց իրեն , մաքուր համեստութեամբ , անալլալ սիրով , աւետան զո՛ն զո՛թեամբ . անբաժան օյնական և կենաց կցորդ ունենալով Սինապեան աղնուաղարմ ընտանիքէն իր ընտրած աղնուափալ կողակիլը : Օրհնեց Աստուած այս սուրբ միութիւնը և շնորհեց իրեն օրհնութեան զաւիներ , կրօնքին , ազգին և պետութեան արդիւնաբեր ընծիւղներ , պարտաճանաչ իրեն նման , պատուաւոր և ազգպաշտ և հաւատացեալ իրեն նման : Այդ կենակցութիւնը ընդունայն աշխարհիս վրայ իր միակ երջանկութիւնն էր , կրքերէ , անճահ վայելքներէ , սնամէջ ժամանցներէ հեռու , հեռու և է աշխարհային դիտումներէ . ամէն բանի մէջ վե՛հ ու վսեմ , ամէն պարագայի մէջ քաղցր և հեղահամայր , ամէն ժամանակ օրինակելի : Յիրաւի Աստուծոյ օրհնութիւնն է այդ օրինակ ընտանիք մը , զոր կազմեց և կատարելագործեց նա , այր կատարեալ , այր ըստ սրտին Աստուծոյ , կորովի և ճակատաբաց իր կրօնական համոզումներուն մէջ ալ : Չխամբեցուց զինքը անկրօնութեան խորշակը , խորշակ՝ աշխարհակործան , երկրակործան , ազգակործան , հեղեղանման անպատմելի անսարքերութեան համաճարակին մէջ . իր կրօնական պարտուց հաւատարիմ

մնաց այս մեծ մարդը՝ Տեսած էր նա և սիրած դարուս Մեծը՝ մեծ բժիշկին ու մեծ հաւատալեալը, Բաթէօրը։ Արդէն կրօնային չափանքներու օրրանին մէջ ծնած էր նա, ձիւներու սակէն ծնանող ծաղկի մը պէս։ Կորով և հաւատք ծծեց իր գորովալի մայրիկին ծոցէն, սէր ծծեց և քաղցրութիւն, այո՛, այն քաղցր համակամութիւնը և անդրդուելի նկարագիրը, որով քրիստոնէութեան տառօն արիւնսնիկ դարերուն գառնուկ հաւատալեալները ապշեցուցին զաշխարհ։ Չկրկցաւ բնաւ այս այրասիրտ համոզումը, այս կենդանի և քեզուն հաւատքը։ Տիեզերաց Արարիչը, խորհող մտքի և հանճարի ստեղծողը, անկեալ ստորնաքարչ մարդկութեան ամենանեղ Փրկիչը, այս արտասուեաց հովտին մէջ թափառող հոգւոյն անմահութիւնը, և Խաչը, և Եկեղեցին, և Առաքելոյն անսասան Աթոռը։ Աթոռը՝ անմահ Մօրն փաղափայտ, զերապայծառ եւ պատուելի, ուր եղին զվեմի հաւատոյ հիման Ս Եկեղեցւոյ, այս գերազանցեալ ճշմարտութիւնները տառաջնորդեցին իրեն խորխափալից այս կեանքին մէջ։ Չլախ՝ խիստ մինչև ցվերջ այս քաղցր, վճիռ, և միանգամայն անպամանկեալ հոգւոյն կորովը, անխախտ համոզումը, մանկանացու կենաց այս երկարատե սեպուած ասպարէզին մէջ, Կարեկցեցաւ իւր համայնքին դառնութիւններուն և միշտ անվրդով դիտեց խորտակուելիք ալիքները։ Ահա այս էր զիջողային նկարագիրը վսեմ, Նափիւհան Անտոն փաշայի, անփոփոխ բարեխիտ և բարերար, իր պարագաներուն համար ըրած անտրտունջ, անվերջ զոհողութիւններն հանրածանօթ են, հոգ չէ թէ քաղած ըլլայ ապերախտութիւն, անհատնում են չորս կողմը սփռած բարիքն, հոգ չէ թէ հանդիպած ըլլայ նախանձի խայթումներուն, զրկուելով ամէն բանէ և ներելով ամենուն առանց մաքառման։ Բարի, անկեղծ, պարզ, զուարթերես, ցաւերը սրտին մէջ պահող, տարիներու բեռան և բախտի հարուածներուն սակ ընկճած և յարկելի ծերը խաւն ինչ կորացած, միշտ վառվառն այն կենդանի աչքերը, այն հրավառ բիրերը, միշտ ժպտուն այն դէմքը, մշտնջենապէս քաղցր, միշտ պապղուն այն վեհ ճակատը, զիտութեան և համոզման սուրբ ցոլքերով պսակուած։ Տեսայ զինքը վեջին հիւանդութեան տառապանաց մէջ, երբ ընկերակցաց բարեկամաց և հիւղողներու անթիւ բազմութիւն կուգար լսիկ և կը մեկնէր, երբ չըջապատուած էր իր սիրասնունդ վառակներէն, երբ իր սիրական երիտասարդ թմիչկը որդիական խանդալատանքով կը խնամէր զինքը, երբ իր ալիւի կողակիցը և մանաւանդ ագնիւ դուռտըրը անպատմելի նարամիտ գորգութեան քանոթ և անձնագոհութեամբ կը խնամէին իրենց այդ գանձը, տեսայ զինքը իր ամբողջ կեանքին այս սրտաշարժ մանրանկարին մէջ, տեսայ թալկացած և ապշկար, սիրելի հայրենեաց և կրօնքին վարձուց արժանի վաղեմի վաստակաւորի մը նման խօսեցաւ, խօսեցաւ մեղմօրէն, իր այն երկնային քաղցր շեշտերով, խօսեցաւ ամէն լաւ բանի վրայ, յիշելով իր

սկիզբն ու վախճանը : Հետաքրքրուեցաւ նաեւ իր համայնքին գործերովն ալ : հարցափորձեց . և ես իր ականջին փափսացի օրինաւոր յարգարման յոյսեր մը : նշոյններ : Անխարիթ աչքերով լսեց . յանկարծ պայծառացաւ այդ դէմքը և ժպիտ մը փթեցաւ ամբողջնաձ աչդ շրթունքներուն վրայ . երջանիկ էր : Խուսափելու վրայ եղող քաղմարդիւն կեանքին ուրախութեան վերջին տրտիւն էր : Այսպէս մարեցաւ այդ պարտաճանաչ , մեծահոգի , ազնիւ և բարի , բարեկարգ և հաւատացեալ մեծ մարդը , իր վերջին կրօնական պարտականութիւնն ալ կատարելով : Ո՛հ , այս մտածմունքներ կարող ըլլան ամոքել ժամուս անհամեմատ դառնութիւնը , և պաշտաման մը թափել վշտակէր բարեկամներու ն և սգազգեստ ընտանիքին սրտերուն մէջ :

Եղբարք իմ , անմխիթար հեծութիւնը հեթանոսաց և անհաւատներու բաժնն է . անոնց բաժինն է անյուսուածիւն և խուար . իսկ մեզի համար մահը դուռ մըն է . անցք մըն է , վերջ մըն է ցաւոց , սկիզբն է երանութեան : «Երանի՜ հ աճող ուրի Տէր Երանի՜ն , Բրիտանիայն այս ընդունայն աշխարհէն բաժնուած է . երկնաքաղաքացի է քրիստոնեայն . քրիստոնեայն գերեզմանի փոխն վրայ չհակիր . այլ վեր կրնայի , յերկինս . ուր յոյս է , ուր լոյս է , ուր Տէրն է . ուր մեր սիրելիներն են , որոնց պիտի միանանք քիչ մը վերջը . հոս պիտի նմանինք անոնց , պիտի ազդեմք . պիտի առաքինանք . և այդ հողէն պիտի յառնենք յերանութիւն յաւիտեական . «Զի եթէ Քրիստոսի հետ մեռնինք , Քրիստոսի հետ պիտի փառաւորուինք :»

Ուրեմն քու մահացու մնացորդներուդ առջեւ մեծարանք խոնարհելով . կ'ողջունեմ զքեզ , ո՛վ հոգիդ անմահ , դո՛ւ՛ իբր պարտուց նահապետակ՝ ինկար աշխատանքի դաշտին վրայ , յաղթութեան դափնիներով ծածկուած . դու մեր վաղանցուկ կենաց հորիզոնէն հակեցար ի յաւիտեականութիւն՝ իբր արեւ մը որ մարը մտաւ ոսկելող պերճանօք :

Ինչ մնաց քեզմէ . . . ափ մը հող և մոխիր : Հիմա ոչինչ են քու մարմինդ , ատղանդիդ կայան լողիդ , սիրաբարբախ սիրտդ . հիմա ոչինչ են գիտութիւնդ , ճարտար արուեստդ , համուկեր խօսքդ . հիմա ոչինչ են ատացուածքդ , փառաւորութիւններդ , պերճազարդ հանդերձներդ , աւանակուռ շքանշաններդ , կամարակապ սուսերազարդ մէջքդ , ոսկեգրուագ կուրծքդ . ոչինչ , ոչինչ , ոչինչ . ունայնութիւն ունայնութեանց : Բայց աղէ՛ , ի բաց տար այս յոյսաւոր ճիշդ . առո՛նք ալ բան մըն են , անոր համար մըայն որովհետեւ առաքելի լաւութեան արդիւնք են : Սակայն բաց ատուի կայ ի քիչ ինչ մի որ չմեռնիր , որ չծառայեր ունայնութեան , որ յաւիտեական է : Կ'ողջունեմ զքեզ , ո՛վ անմահ սիրելի հոգի : Եւ ահա անմահ է ի քեզ

մաքուր յիշատակը . յիշատակը քու աշխատասէր պարտաճանաչու-
թեանդ , քու բարութեանդ , քու զոհաբեր առաքինութեանդ . յիշատա-
կը՝ քու կեանքիդ և էութեանդ . քու թողուցած կենդանի նկարներուդ ,
քու սիրամանունդ զաւակներուդ , որոնք զքեզ կենդանի կը պահեն ի-
րենց վրայ՝ իբրեւ հաւաքս գաւակ զհմանութիւն քերելով հօրն . և վեր-
ջապէս յիշատակն անմահ քու ձգած օրինակիդ , որուն պիտի հետեւին
լաւութեան նախանձախնդիրք : Եւ ահա ասոնք և քու հաւատքդ ու
բարեպաշտութիւնդ որոնք իբրեւ զուարթուն հրեշտակներ կը թեւա-
պարեն այս ընդունայնութեան վիհին վրայ , ասոնք ամէնքը լուսաճա-
ճանչ կը պտտկազարդեն քու անմահ ճակատդ յանվերջ ուրախութեան :
Կ'ողջունեմ զքեզ , ո՛վ անմահ սիւնի հոգի . խաղաղութեամբ հանգի՛ր ,
մինչեւ որ մենք ալ մեր մահկանացուն կնքենք հաւատքով և հուենք
յերկնս . խաղաղութեամբ հանգի՛ր և սիրելիացդ և բարեկամացդ և
ազգիդ վրայ իբրեւ աստեղաց բեկրեկ փայլումներ կաթեցո՛ւր շրթներէդ
անմահութեան ժպիտներ :

ԳԷՈՐԴ Վ. ԹԷՐԶԻՊՍՇԵԱՆ



ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼՆԶԵԱԿ

Ոյ երբեք հանգիստ եւ սառապանք միշտ,
Միշտ խառնար գիշեր՝ ցորեկ ո՛յ երբեք,
Ո՛յ-երբեքն ահա՛ ինձ ահաւկոյ միշտ,
Միշտ լոցերու մեջ՝ հանգիստ ո՛յ երբեք:

Ոյ երբեք, կ'ըսեմ՝ եւ կը դողամ միշտ,
Միշտ կը խորհիմ, չեմ դադարիր երբեք:
Ոյ-երբեքն յիշե՛, կը փրկուիս միշտ,
Միշտ կը կորսուի, մոռցողն ոյ-երբեք:

Ոյ-երբեք անգութ, որ կը սկսիս միշտ,
Մի՛շտ անգութ որ չես վերջանար երբեք,
Ո՛յ-երբեք արժան մեծութեան միշտ:

Միշտ կ'ընկճե՛ դիս այս ահե՛ղն ոյ-երբեք,
Ո՛յ երբեք կրնամ գիտնալ ունկերջ միշտ,
Միշտ կայ, կը հաւատամ, որ չ'անցնիր երբեք:

(Թրգմ. Ի Գաղիսիէն)

ՅՈՒՆԿ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Վեր. Հ. Սահակ Վ. Որդական իր կ'առկայութեան համար գիտեց առ Ամեն և
Գերբաւանդ Հոգեւոր Տէր և Ներումն խնդրեց և իր հպատակութեան ի նշան իր հետեւեալ
ձեռագիր յայտարարութիւնը յանձնեց անոր և կախակայութիւնը վերցուելով, պատարաս
գելու հրամանն արտեցաւ իրեն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ես ստորագրեալս ներկայ պատգովական գրութեամբ կը յայտարարեմ թէ՛ ինչպէս որ
պէտք է Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ մէջ, Սրբազան Քահանայապետին ամէն հրամաններուն
եւ անհրաժեշտութեան կատարելով, և նաեւ սխալ յայտարարութեան եւ անհրաժեշտութեան
եւ անհրաժեշտութեան եւ անհրաժեշտութեան պիտի կենամ Կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբունք-
ներուն եւ կանոնաց:

Նոյնպէս Ս. Արքունի ճանչցուած Եկեղեցական պետերու հետ հպատակութեամբ եւ
յարգանքով պիտի վարուիմ. առանց ճանաչելու եւ վարկաբեկելու զիրենք: Դարձեալ կը
յայտարարեմ թէ Ս. Արքունի բանադրուած ու ներծածող հրահրական անձանց եւ
անոնց զաղափարակիցներուն համար չպիտի ըլլամ եւ մեծմտիքն չպիտի ցածեմ

եւ ներկայ խնդիրներու նկատմամբ անոնց հետ հաղորդակցութեան չպիտի մտնեմ եւ եթէ երբեք հարկ ըլլայ այնպիսեաց հետ խօսակցիլ, պիտի հասկցնեմ անոնց իրենց մոլորեալ վիճակը:

Վերջապէս խոսքով եւ օրինակաւ իբրեւ նմաւիս Կաթողիկէ քահանայ պիտի վարուիմ եւ առ օրինաւոր իշխանութիւնն հպատակութեամբ եւ յարգանաց զգացումներս պիտի աշխատեմ ներգնել հաւատացեալոց: Եւ կ'ուզեմ որ իմ այս յայտարարութիւնս հրատարակուի Կաթողիկոսատանի պառօնական քերթին մէջ:

Յորոց ի հաւատս կ'ստորագրեմ.

Կ. Պոլիս, Բերա, 4 Հոկտ. Ն. Տ. 1912

(Ստորագրեալ) Հ. ՍԱՀԱԿ Վ. ՍՐՈՊԵԱՆ

*. Կեսարիոյ վիճակաւոր Արհի. Պահպանեան Անտոն Եպիսկոպոսին իւր անձնական եւ քանի մը իւր թեմին վերաբերեալ գործերը կարգադրելու համար յիշկեալիս գտցած ըրալը գրած էինք մեր 56 թուոյն մէջ:

Կ. Պոլիս գտնուող Դեր. Քէշիշեան Մեսրոպ Վրդ. եւս նորին Արհիպատեալութեան յատուկ հրաւիրանաց համաձայն Պոսէն ուղղակի Գողթաթիւ երթալով իւր սիրեցեալ Եպիսկոպոսին տունը սիրալիր հիւրընկալութիւն մը գտեր է, Եպիսկոպոս եւ Փոխանորդ ի միասին իրենց թեմին գտնական պիտոյիցը համար աշխատելէ զկնի, Գեր. փոխանորդն Ոգոստ. 19ին Ն. Տ. եւ Արհի. Եպիսկոպոսը Սեպտ. 19ին Կեսարիայէն յատուկ կերպով իրեն համար զրկուած փառաւոր կառքով մը իւր թեմը վերադարձեր է:

Նորոպսակ Եպիսկոպոսը աւելի իւր մաքին մէջ քաղմութիւն եւ ազգօգուտ ծրագիրներ, ի մէջ այլոց ազգային յատուկ վարժարանի մը բացումը, եւ Կեսարիոյ հաշակաւոր Աթոռանիսա Եկեղեցւոյն վերանորոգութեան զմբէթին նորոգութիւնը: Ամենաբարի Տիրուհի մէն ի փառս որոյ կ'աշխատի անգու, իրեն ձերնարկներուն մէջ յաջողութիւն կը մտղծեմք, իսկ Կեսարիոյ Ժողովարդը այսպիսի աշխոյժ եւ գործունեայ հովիւ մը ունենալուն, եւ զայն ըստ արժանւոյն գնահատել գիտնալով, անոր հանգէպ ցցոցցած սիրոյն եւ որդիական յարգանաց համար ի բոլոր սրտէ կը շնորհաւորեմք:

*. Անցեալ ուրբաթ օր, 4 ամսոյս ըստ Ե., ի Տէր հանգեաւ ալեգարդ եւ քաղաքաւորութեամբ բժիշկն եւ վիրաբոյժ Տօգթ. Անտոն փաշա Նաֆիլեան, իր ութսուներկու տարուան հասակին մէջ, ի խոր սուգ համակելով իր պատուական ընտանիքն եւ սոբորջ հասարակութիւնը, կը մաղթենք ի Տեառնէ իր հոգւոյն համար յաւիտեական հանգիստ եւ իւր պաւրագայից երկնաւոր միւթնարութիւն: Իր կենսագրականի յօրինումը հոս գանց կ'ընենք՝ մանրամասնօրէն գրուած ըլլալով այն՝ խօսուած Գոմարտակոնին մէջ զոր յօժարութեամբ կը գնենք Կաթողիկէ Արձագանցի ներկայ թուոյն մէջ:

*. Վսեմ Կարդինալ Գուլիէի մահուան առթիւ ցաւակցական թուղթ մը գրած էր Ամենապ. Հոգեւոր Տէրն առ Արհի. Տէշլէթ օգնական Եպս. Լիոնի Ու՝ գեղեցիկ պատասխանագրով իր շնորհակալութիւններն ու փոխադարձ մաղթանքներն յայտնեց առ Հ. Տէր:

*. Արհի. Իսրայէլեան Ստեփան Եպ. անցեալ շաբաթ օր մեկնեցաւ իւր թեմն ի Խարբուլ:

Λ Λ Λ Λ Λ Λ Λ

Ն Ե Ր Բ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Յրկու շաբաթէ ի վեր է պատերազմաշունչ հողմեր փչեցին Պաղգաններէն ի Թուրքիա եւ յանկարծ բռնկեցան զգացումներն եւ յոտս կանգնեցան բանակներ: Ընդհանուր զօրակոչ ըրած էին Պաղգանեան չորս տէրութիւններ՝ Պուլիսթիա, Սերպիա, Սեւ Լեռ եւ Յունաստան: Ասանց անժամանակ յանդգնութեան պատասխանելիւ մտքով նոյն ընդ նոյն ընդհանուր զօրահանութիւն կառարեց նաեւ Թուրքիա սղիններն ծայր տասիճան գերազրդուութեան հոտած էին. ամբողջ Թուրքիա ոտքի ելաւ. կոնստանուր քանակներն զղրուեցան եւ կամուսններ սկսան կազմուիլ. եւ ու գեւ ամէն կողմ. մեծագործ միւթիւններ

Հայաբաւար մարդերով. ոգիները լի ցամամբ, ամենուտեք «Պաշտեալով կ'ուզենք» աղա-
զակներ կը բարձրացնեն եթերին մէջ. երկու կողմանէ ահագին պատրաստութիւններ.
գարհաբերի բաղիտներ կը սպառնային. կայծ մը բուսական պիտի ըլլար. սակայն ար-
իւնհեղութիւններու Եւքրոպական մեծ տէրութիւններն շարունակ կը թելադրէին պաղար-
իւնութիւն, մանաւանդ պաղքատեաններու. և կը խոտտանային իրենց որ այն բարենորո-
գումներն զորս իրենք կը պահանջէին, Թուրքիոյ կողմանէ պիտի գործադրուէին ոչ միայն
Եւքրոպական մասին մէջ, այլ բովանդակ Անատոլիոյ մէջ ալ. Հետեւաբար մարդասպան
պատերազմի բնաւ պէտք մը չկար. Սակայն գրգռութիւնները տեւեցին մինչեւ որ մեծ
տէրութեանց ազդու միջամտութեամբ մը վերջապէս Համոզում գոյացած էր թէ անօգուտ
էր պատերազմը. Իսկ Թուրքիոյ Նախարարական Խորհուրդը որոշում տուաւ բարեկարգու-
թիւնները գործադրել Պերլիի Դաշնագրին 23րդ Յօդուածին տրամադրութիւններու հիման
վրայ և գործադրութեան ղեկը Նահանգային օրէնքի այն տրամադրութիւնները, զորս
1880ին ստանցին և օտար պաշտօնատարներ զրի առած էին վերոյիշեալ 23րդ յօդուածին
և 1880ին Նահանգային օրէնքին վրայ աւելցուած յօդուածներուն համաձայն. Որոշեց
առժամայն օրինագիծ մը պատրաստել և ըստ այնմ գործադրել վերոյիշեալ դաշնագրին
և օրինագիծին մէջ յիշուած հիմնական բարենորոգումները. Նախարարաց Խորհուրդը Նկա-
տի առնելով Նաեւ Թուրքիոյ միւս մասերուն մէջ ալ բարենորոգումներ գործադրելու ստի-
պողականութիւնը և օտար տէրութեանց կողմէ այս մասին ալ կատարուած գիմումը,
որոշեց Բուժէլիի համար գործադրելի բոլոր բարենորոգումները և այդ առթիւ ժողովրդին
տրուելիք առանձնաշնորհումները գործադրել Նաեւ Անատոլիոյ և Թուրքիոյ միւս մասե-
րուն մէջ ալ. Տէրութեանց ներկայացուցիչները այս առթիւ խօսելով Թուրքիոյ ընդհ. բա-
րեկարգութեան խնդրոյն վրայ, հրաւիրած են Սամ. կառավարութիւնը որ այդ ձեռնարկը
միմիայն Բուժէլիի համար չըլլայ, այլ ամբողջ Թուրքիոյ և բոլոր Սամ. ազգերուն համար,
որով մեծապէս ստատրած պիտի ըլլայ խաղաղութեան և այս առթիւ դեռ պահները խնդրած
են Նաեւ որ բարենորոգումները ըլլան մեծ տէրութեանց ներկայացուցած ծրագրերուն և
առաջարկներուն համաձայն, նկատի առնելով թէ քանի որ Թուրքիա արդէն փափաքող
է ներքին ընդհանուր բարեկարգութեան մը, որ և է պատճառ չկալ որ այս մասին շուզե-
գոհացում տալ տէրութեանց բարեկամական խորհուրդին:

*. Հակառակ ամէն ակնկալութեան երեքշաբթի օր կէս օրէն վերջը պատերազմ
հրատարակեց Սեւ Հեռ, որուն գործակատարը գալով Քապը Ալի, Արտաքին գործոց Նա-
խարար Գարրիէլ Է. Ֆ. Նորատուէկեանի յանձնեց վերջնագիրը և իր անցագրին առնելով
Պոսէն մեկնեցաւ Սամ, կառավարութիւնը անմիջապէս հրաման տուաւ բանակին բուռն
սաստկութեամբ մղել թշնամայն յարձակումը և քալել Զէթինէյի վրայ. Մեծ ճակա-
տամարտ մը մղուած է Պէրմանի շուրջը, և օսմ. զօրքերը և արպանդի կամաւորները
պաշարման գիծը խզելով, մտած են Գարատաղի հողը. Թշնամին կորուսած է 1,200 հոգի:

*. Պաշտեալով վիճակ Պոլսոյ և Բուժէլիի նահանգներուն մէջ. — Կայսերական
հետեւեալ իրաւէով երէկ իրիկուն ուշ ատեն պաշարման վիճակ հրատարակուեցաւ Պոլսոյ
և Բուժէլիի նահանգներուն ու Զաթարճայի գաւառին մէջ, և այս իրաւէին գործադրու-
թիւնը յանձնուեցաւ Պատերազմական և ներքին գործոց Նախարարներուն:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՐԱՏԷԻՆ ՊԱՏՃԷՆՐ

«Բուժէլի վէ Խոսանայով վիլայէթի իւլ Զարալնա Սաննաղը Զախիլիսէ Խարէի
Էօրփլիէ իլանը քենիպ օլըմըս քը:»

Պու իրաւէի սէնիյէնին ինտարնա հուրպլիէ վէ Զախիլիէ նազարարը մէմուր քը:

328 Իլուլ 24

ՄԷՀԱՄԷՏ ԲԷՇՈՍ

Այս իրաւէն ստորագրած են Վարչապետէն գոտ միւս բոլոր Նախարարներն ալ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. Պօղոս և Բրիսոս	561
Վ. Խեննայի Ս. Հաղորդութեան Համագրային Համաժողովը	564
Ի դառնալիս մահ Վսեմաբուֆ Անսոն փաշա Կաթիլեան	567
Հնչեակ	574
Տեղեկագրական	574


ԱՐՏՕՆԱՏԷՐ

30ՎԶ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏԵՐԷՆ-ԽՄԱԿԻՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԵՆԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուսուուս հասցէի Թիւ 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր եջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյզ ամեն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՌՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար	
Տարեկան	Դնէկ . արծ. 40
Վեցամսեայ	» » 20
Արտասահման	
Տարեկան	Ֆրանկ 10
Վեցամսեայ	» 5
Բաժանորդագրութիւն կանխիկ կը վճարուին Մանչա-Բասուկ եւ կամ մէկ մէկ դրանց նամակադրութով :	

Մէկ թիւ 1 Դանէկան



Նամա . յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Բերա, Պայքամ փողոց Թիւ 5

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ա եւ է յօդուած:
 3.— Չեղագիրներ եւ չեն դարձուիր:
 4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:
 5.— Դրանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկատարուին: